ները եւ սարկաւագները ըստ հին համարագրի արձակուած էին հարկերից· այժմ նրանց ցուցակ են անց կացնում —"Presbyteros kai diaconous ho palaios census ateleis apheken. Hoi de num... apegrapsanto" (P. G. 32 Col. 509):

Նամակագիրը յիշում է նաեւ, որ կան քահանաներ, որոնք ազատ են մնացել հարկից, աւելի ճիշդ որոշ արտօնութիւն են վայելում, եւ զանգատւում է, որ այդ արտօնութիւնը թողնւում է ժառանգաբար նրանց որդիներին: Հայրապետը գտնում է, որ այս ձեւը անարդար է, որովհետեւ յաճախ որդիները անարժան են վայելելու ժառանգած առանձնաշնորհումը: Ուստի առաջարկում է, որ իրեն թողնելի առանձնաշնորհումի բաշխումը եկեղեցականների մէջ, որպէսզի արժանաւորները ստանան եւ եկեղեցու պետը իրաւունք լինի նրա պաշտօնէութեան դրութեան:

Բարսեղի առաջարկը հասկանալու համար, ինչպէս եւ արտօնութեան էութիւնը, պէտք է գիտենալ հետեւեալը.—

Հռովմէական կայսրութեան մէջ Դիոկլետիանի օրից հարկահանութեան հիմը կազմում էր jugum, *որ նշանակում է բառացի* լուծ, *եւ իրապէս հողի այն քանակը, որի արդիւնքը բաւական է մի մարդու ապրուստի համար: Հարկային համարագիրը կայանում է նրանում, որ պարզեն եւ գրի առնեն, թէ ով որքան* jugum *'լուծ' հող ունի: Ամէն մի լուծի համար պահանջւում է որոշ հարկ:*

Արտօնութիւնը, որի մասին խօսում է Բարսեղ Կեսարացին, արտայայտւում է նրանով, որ որոշ թուի juga *զեղչւում է· եթէ մէկն ունի 20 լուծ հող, արտօնւում է տալ հարկ միմիայն դէցուք կէսի համար, ուրեմն տասն լուծը բաշխւում է նրան:*

Բարսեղի նկատողութիւնից երեւում է, որ կային եկեղեցական պաշտօնեաներ, որ կարողացել էին ձեռք բերել առանձնաշնորհում, հետեւապէս, շատ հող ունենալով, քիչ հարկ էին վճարում, կամ դուցէ միանգամայն ազատ էին: Հայրապետը յօժար չէ, որ որդիները եւս օգտուեն հայրերին զիջած արտօնութիւնից: Նա առաջարկում է որ յայտնի թուով անհարկ juga *իր տրամադրութեան տակ դնեն, որ ինքը եւ իր յաջորդները արժանապէս բաշխեն վաստակաւոր երէցների միջեւ:*

Կոստանդին Մեծը, ինչպէս որ ակնարկում է եւ Բարսեղ Կեսարացին, արդարեւ ազատ էր յայտարարել եկեղեցական հողերը հարկերից· օրէնքը հասած է մեզ:

Նրա յաջորդների օրով օրէնքը թւում է թէ փոխուած էր եւ եկեղեցականները գրուած էին հարկատու, adscripti censibus. *Բարսեղ Կեսարացու միջնորդութեան հետեւանքը, իրական թէ տեսական, այն պիտի լինէր, որ արտօնեալ երէցներ եւ սարկաւագներ որդիք եւ եղբայրներ հարկի տակ պիտի ընկնէին: Ճիշդ այն ինչ որ Փաւստոսն է ասում, որ «զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւագացն» ծառայութեան առաւ: «Եօթն հողի» վերածումը «երկու հողի» կարելի է կապել Բարսեղի ակնարկած* juga*-ներին:*

Ասորի դատաստանագիրքի մէջ jugum *բովանդակում է որպէս հողաչափ* 20, 40 *եւ* 60 jugerum, *նայելով հողի յատկութեան, այսինքն* 5, 8 *եւ* 12 *հեկտար: Եթէ ընդունենք որ Պապը մի մի* jugum *է թողել զիւղական երէցներին եւ սարկաւագներին, քանակը բաւարար է: Փոքր Հայքում եւ Պոնտոսում* 30 jugera *էր համարւում* jugum:

Պապին վերագրուած գործը դժուար է անջատել այն երեւոյթներից, որ մտահոգութիւն էր պատճառում Բարսեղ Կեսարացուն: Արդեօ՞ք կայսրներին հետեւելով Պապը բռնացել էր իրօք եկեղեցականների հողային եւ անձնական դրութեան վրայ, որ անկարելի բան չէ: Նոյնչափ հնարաւոր է որ Բարսեղի կենսագրութեան միւս դէպերի հետ անցած լինի Նեղոսին եւ mutatis mutandis *յարէ Պապի անուան: Այս դէպքում ենթադրելու է որ արեւմըտեան* jugam *չէ գտել հայացի արտայայտութիւն եւ փոխարինուել է հող ընդհանուր բառով:*

Ամէն պարագային Փաւստոսի վկայութիւնը պէտք ունի ստուգման: Նրանից քամած հող երդոյ չէ բնորոշում իր նախադաղափարի էութիւնը: Բնական է, որ չենք կարող հետեւել պ. Մանանդեանի խորհրդածութիւններին: Զգիտենք մտածութեան ո՛ր օրէնքով հող երդոյ համարւում է ոչ միայն յատուկ հողաբաժին,